


Ս Ի Ո Ն

ԺԸ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1944

ՀՈԿՏ. - ՆՈՅԵՄ. - ԴԵԿՏ.

10-11-12



ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԿ
ԱՄԵՆ. Տ. ԿԻՐԵՂ Ծ. ՎՐԴ. ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

ԻՍՐԱԵԼԻԱՆ**ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԲԸ****ԱՄԵՆ. Տ. ԿԻՐԵՂ Մ. ՎՐԴ. ԻՍՐԱՅԷԼԵԱՆ**

Շուրջ երեք ամիսներու սուգի շրջանէ մը վերջ, Ս. Յակոբեանց դարաւոր Աթոռը, և Միաբանութիւնը, կը վերագոյնեն ընտանոն կեանքի պայմանները, ընտրութեամբը ՆՈՐԻՆ ԱՄԵՆ. Տ. ԿԻՐԵՂ Մ. ՎՐԴ. ԻՍՐԱՅԷԼԵԱՆԻ, ի Պատրիարքութիւն Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Առաքելական Աթոռին:

Հանգուցեալ Տ. Մեսրոպ Ս. Պատրիարք Հօր կսկիծն ու յառաջ բերած հոգեկան տագնապը շատ խոր եղան, կը մխիթարուինք սակայն գոնելով յանձին Նորընտիր Պատրիարքին, Հանգուցեալին արժանաւոր յաջորդը Ս. Յակոբեանց նուիրական ժառանգութեան իբրև Պետ և պահապան:

Ամեն. Տ. Կիրեղ Մ. Վրդ. Իսրայէլեանի երիտասարդ կեանքի և գործունէութեան շրջանը նուիրումի մէջն անցաւ Ս. Աթոռոյ բարգաւաճման, և ինքը հաւատարիմ ուխտեալը կեանքի այս կանոնին և անոր պահանջած լրջութեան, եղաւ զիտակից մարդը իր կոչումին, ու իր վանական կեանքի քառորդ դարը տքնաշան, ծանր և օգտակար վերելքի շրջան մը կազմեց:

Մենք կը հաւատանք կոչումին, որ ձրի բառ մը չէ ինչպէս զայն ունեցողներուն, այնպէս ալ զայն ունենալ ուզողներուն համար: Ամեն. Տ. Կիրեղ Մ. Վրդ. Իսրայէլեան քառորդ դար առաջ կալկաթայի Մարդասիրական Ճեմարանին ապա նոյն քաղաքի Համալսարանին մէջ բոլորած էր բարձրագոյն ուսման փայլուն իր ընթացքը, որով իր առջին բաց ունէր աշխարհիկ բոլոր յաջողութեանց ճամբաները: Սակայն ի Հնդկաստան նուիրակ զացած Հոգեւոյս Տ. Թորգոմ Սրբազանի ետեւէն, անիկա կը լքէ փառքի և ոսկիներու այդ ոստանը, ինքզինքը տրամադրելով շատ աւելի գեղեցիկ և սրտառուչ պարտականութեան մը կատարումին — սպասը Հայաստանեայց Եկեղեցւոյ —:

Խռովքի, արիւնի և յոյսի օրեր էին Թորգոմ Սրբազանի նուիրակութեան շրջանը: Տիրոն Իսրայէլեան, աշխարհիկ անունը Նորին Ամենապատուութեան, Եգիպտոս է արդէն, իբրև ուսուցիչ Գալուստեան վարժարանին և քարտուղար Առաջնորդարանի: Երեք տարի վերջ Երուսաղէմ է ան, նուիրելու համար Հայ Եկեղեցւոյ զերագոյն ամբարտակներէն մէկուն ծառայութեան, իր կորովը, հրմտութիւնը, կամքն ու քաղցրութիւնը:

Սրբազան իր ասպարէզի սեմին իսկ, ան կը բերէ որոշ նորութիւն և բարիք Ս. Աթոռոյ շրջանակէն ներս, իբրև եկեղեցական մը որ կը խօսէր պետական լեզուն պահանջելի կատարելութեամբ, թափանցումն ընելով պետական և միջարանտանային շրջանակներու քիչ մը դժուար ու ծանր մթնոլորտին, և պահելով իր պատկանած Աթոռին ոչ միայն դարաւոր վարկը, այլ և անոր վրայ աւելցնելով նոր բարեացակամութիւններ: Զինքը կանխող լուսահոգի երեք պատերաքներու շրջանին, Ամեն. Տ. Կիրեղ Մ. Վրդ. Իսրայէլեանը պետական շըր-

Հանակներու և Ս. Աթոռոյս յարաբերութեանց միջև եղաւ ամենէն բարերար և երկուստեք գնահատուած պաշտօնեան: Կը յիշենք այս մանրամասնութիւնը, ցոյց տալու համար այդ շատ կարևոր մարզին վրայ Նորին Ամենապատուութեան ձեռք բերած փորձառութիւնը, ստեղծած վարկը, որ այնքան բարեբեղով օգտագործուեցաւ Հաստատութեան կեանքի վերջի քառորդ դարու մէջ: Ս. Աթոռը կառավարութեան առջև իր հմայքին մէկ կարևոր մասը կը մնայ պարտական այս պարտաճանաչ և հաւատարիմ աշխատուորին:

Այսպէս էր որ Ս. Աթոռոյ յարաբերութիւնները օտարներու հետ ստացան տակաւ որոշ կերպարանք մը, ուր ճշտապահութիւնը, կենցաղավարութիւնը, քաղցրութիւնն ու լրջութիւնը իրարու կուգային երիտասարդ այդ վանականին տալու յարգանքէ աւելի բան մը, ինչպէս օտարներու քով, այնպէս ալ վանական շրջանակէն ներս: Դուրեան Սրբազանը կը զուրգուրար իր առատաշնորհ քարտուղարին և թարգմանին վրայ, որ զիտէր ընդունիլ բոլոր օտարները, խօսելով անոնց լեզուն և ձգելով տպաւորութիւն թէ հանգամանաւոր և թէ զբօսաշրջիկ այցելուներու վրայ: Այն օրերուն, երբ տակաւին Ս. Աթոռը օժտուած չէր երիտասարդ և որոշ պատրաստութիւն ստացած հոգևորականներու փաղանքով, Ամեն. Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Խարայէլեանը լաւագոյն և միակ ընձեռեցի յոյժն էր Ս. Յակոբին, և մնաց միշտ խարսխային ոյժը վանական արտաքին ու ներքին կեանքին համար:

Իր սրբազան ասպարեզի առաջին օրերէն, Նորին Ամենապատուութիւնը ժրպէն և օգտաշատ ուսուցիչը, Փոխ-Տեսուչը ապա Տեսուչն է ժառանգաւորաց և Ս. Թարգմանչաց Վարժարաններու, այն օրերուն՝ երբ կրթական այս Հաստատութիւններուն մէջ ժամանակի պահանջներուն համընթաց իմացական ու հոգեկան նոր մակարդակներ շինելու ճիգեր սլիկը կ'առնէին:

Վերանորոգման և արդիացման այս ծրագրի և արդիւնքին մէջ ուշադրաւ է բաժինը Ամեն. Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Խարայէլեանին, որ բոլոր իրեն յանձնուած պարտականութեանց մէջ զիտցաւ դնել փոյթ, նուիրում, զուրգուրագին խանդավառութեամբ հանդէպ զործին, երբ մանաւանդ իբրև Փոխ-Տեսուչ ժառանգաւորացի, ստեղծեց մեծ հղթօր վայել սրտագին համակրութիւն ուսանողներու հոգիէն ներս: Ս. Յակոբեանց երիտասարդ Միաբանութիւնը երախտագէտ զգացումներ ունի այդ օրերէն իր հանդէպ: Հայրն էր, ինչպէս եղբայրն և առաջնորդը բոլորին: Իր դերը մեծ եղաւ մանաւանդ, Հայաստանեայց Եկեղեցւոյ սպասին համար մատող հոգիներու մէջ՝ երբ կը ստեղծէր աշխարհիկ դիւրութիւններու ընդդէմ և յաջողութեանց հակառակ սրտագին նուիրման և զոհողութեան զօրաւոր զգացումներ՝ ժառանգաւորներու հոգիներէն ներս: Կոչումով ուսուցիչ էր, և կոչել զիտցաւ ուրիշները: Բոլորս ալ իրմով առաջնորդուեցանք սրբազան մեր ասպարեզին: Այդ օրերուն անիկա ամենամատաղ՝ բայց հասուն ոյժը կը կազմէր տարեցներէն վերջ և նորերէն առաջ, այսինքն փորձառութեան և եռանդի հանգոյց մը:

Իբրև եկեղեցական, նորընտիր պատրիարքը կը մարմնաւորէ մեր Եկեղեցւոյ դարաւոր լաւագոյն աւանդութիւնները: Կուգայ քահանայական ընտանիքէ մը, և հոգիով ու կոչումով ընդունակ է ան իր անձին վրայ կրելու Հայ Եկեղեցականին աւանդական մտապատկերին լիալիր արտացոլումը: Պատրիարքական բազմապահանջ և բազմազբաղ կարիքներուն, անիկա շատ մօտէն կրթմանքը

ըրաւ, տարիներէ ի վեր իր ստանձնած պաշտօններուն մէջ: Գիտե՞նք իր տես-
չութիւնները, և վանական բազմերես պահանջներուն իր սիրայօժար դիմաւո-
րութիւնները, բայց կ'ըզենք ծանրանալ Ս. Յակոբեանց երկրորդ մեծ պաշտօնին,
Լուսարարապետութեան իր հանգամանքին: Մեր ժողովուրդէն թերեւ շատ քիչեր
գիտեն ի՞նչ որքան կարեւոր պարտաւանութիւններ կապուած են այդ պաշտօնի
տառին, ինչպէս ողբին: Լուսարարապետը ներքին վարիչն է Միաբանութեան,
Ս. Տեղեաց հակոյն ու յանձնաձողը, ալ ձեռքը պատրիարքին և Սրբոց Յակոբ-
եանց զինուորեալ Միաբանութեան սպարապետը:

Ամեն. Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Իսրայէլեան իբրև Լուսարարապետ հինգ
տարիներ պահեց Աթոռին վարկը, և Միաբանութեան մէջ որոշ համակրանք:
Այս մտածութիւնը կարգին բերկրանքով ու հիացումով կը յիշենք Հոգեւոյս
Մեսրոպ Պատրիարքի հիւանդութեան վերջի օրերուն, վանքին ենթարկուած
տագնապի ընթացքին, Ամեն. Տ. Կիւրեղ Մ. Վրդ.ի ցոյց տուած արի, պարկեշտ
և աթոռանուէր կորովը, դիմակալելով այն դժուարութիւնները՝ որոնք յարուց-
ուեցան այնքան տղայամտօրէն, զնասելով Հաստատութեան վարկին և զոհողու-
թիւններով ձեռք բերուած աշխատանքին: Բոլոր այդ արտաբանութիւններու ըն-
թացքին, հաղառակ իր ենթարկուած հոգեկան ու ֆիզիքական ցաւերուն, Նորին
Ամենապատուութիւնը մնաց միշտ հաւատարիմ և աննկուն, խոր նախանձախն-
դրութեամբ տրամադրելով ինքզինքը Հաստատութեան պատուին ու փառքին:

Կրօնական տեսակէտով՝ բարեպաշտ, կրթական տեսակէտով՝ զարգաց-
եալ, կարգ ու կանոնի նախանձախնդիր և հաւատարիմ անձնաւորութիւն մըն է
Նորընտիր պատրիարքը: Հակառակ արտաքին ու ներքին դժուրակ պայմաննե-
րուն, թափուր են մեր նուիրապետական երկու աթոռները, նօսրացած է շարքը
մեր Եկեղեցիի սպասաւոր ուժերուն, պատերազմ և անոր տակաւին անստոյգ
հեռանկարին մէջ ծրարուած բերութիւնները կը մնան դժուրակ և ջլատիչ ազդակներ
կրօնական, կրթական, տնտեսական և վարչական գործունէութեանց համար,
ինչպէս բովանդակ ազգին այնպէս ալ Ս. Աթոռոյ մէջ: Սակայն շնորհիւ Աստու-
ծոյ, Նորընտիր պատրիարքին որ երիտասարդ և կորովի ըլլալու առաւելութիւնը
ունի իր նախորդներէն, և անձնուէր ու զիտակից Միաբանութեան, լիայոյս ենք
որ բոլոր դժուարութիւնները պիտի հարթուին, շարունակել տալու համար այս
Հաստատութեան իր հոգևոր և իմացական այն վերածնութիւնը որ մաքուր ու
բարի ձեռքերէ արծարծուեցաւ Սիրնի այս բարձունքին վրայ:

Նախորդ բազմարդիւն պատրիարքներէն օրով սկզբնաւորուած ու բար-
գաւաճած կրօնական, կրթական, տնտեսական և ժողովրդային ծառայութեան
համար թափուած ջանքերը, և ստացուած արդիւնքները, եթէ Տէրը կամենայ,
պիտի չնուազին երբեք: Ունինք այս հաւատքը, վասնզի Նորին Ամենապատուու-
թիւն Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Իսրայէլեանի բովանդակ կեանքը և ձգտութիւնները այդ
երաշխիքով հարուստ արդիւնքներ շատ ունին այն քառորդ դարու շրջանին, որ
Ս. Աթոռոյ մէջ իր կեանքին և գործունէութեան շրջանը կը կազմէ:

Մագիթնք որ Տիրով հովանին ժիշտ անպակաս ըլլայ շնորհազարդ Նորըն-
տիր Պատրիարքին և անձնուէր այս Միաբանութեան վրայ, որպէսզի պատկ-
ուին բոլոր ակնկալութիւնները Միաբանութեան և Ազգին: